

## Ինչպես նշում կատարել ձեր քվեաթերթիկի վրա

Ինչպես նշում կատարել գաղտնի թղթապանակի մեջ դրվող քվեաթերթիկի վրա

Եթե մասնակցում եք տեխնոլոգիաների կիրառմամբ քվեարկությանը նախնական քվեարկության ժամանակ կամ ընտրությունների օրը, ապա ձեզ կարող է տրվել քվեաթերթիկ գաղտնի թղթապանակով:

1. Տարեք ձեզ հետ գաղտնի թղթապանակը, որի մեջ դրված է քվեաթերթիկը, դեպի քվեարկության Էկրանի հետևի մասը:
2. Հանեք քվեաթերթիկը գաղտնի թղթապանակի միջից և կատարեք X նշումը այն թեկնածուի անվան կողքին գտնվող սպիտակ շրջանակի մեջ, որին ուզում եք տալ ձեր ձայնը:
3. Ետ դրեք նշված քվեաթերթիկը գաղտնի թղթապանակի մեջ և հանձնեք այն ձայների հաշվիչ սարքի մոտ կանգնած անձին:
4. Սպասեք մինչև ձեր քվեաթերթիկը ներմուծվի հաշվիչ սարքի մեջ:

Եթե ձեր քվեաթերթիկի վրա նշում կատարելիս սխալ եք թույլ տվել, ապա դրեք քվեաթերթիկը գաղտնի թղթապանակի մեջ և վերադարձրեք այն ընտրական հանձնաժողովի անդամին: Ձեզ կտրվի փոխարինված քվեաթերթիկ, որի վրա կարող եք նշում կատարել:

Ինչպես նշում կատարել ծալված քվեաթերթիկի վրա

Եթե մասնակցում եք առանց տեխնոլոգիաների կիրառման քվեարկությանը նախնական քվեարկության ժամանակ կամ ընտրությունների օրը, ապա ձեզ կարող է տրվել ծալված քվեաթերթիկ:

1. Տարեք ձեզ հետ ծալված քվեաթերթիկը դեպի քվեարկության Էկրանի հետևի մասը:
2. Բացեք ծալված քվեաթերթիկը, որպեսզի տեսնեք թեկնածուների անունները:
3. Կատարեք X նշումը այն թեկնածուի անվան կողքին գտնվող սպիտակ շրջանակի մեջ, որին ուզում եք տալ ձեր ձայնը:
4. Կրկին ծալեք նշված քվեաթերթիկը և վերադարձրեք այն ընտրական հանձնաժողովի անդամին, որպեսզի իր անվան սկզբնատառերը մակագրի քվեաթերթիկի հետևի մասում:
5. Այն բանից հետո, երբ քվեաթերթիկը վավերացվել է, այն վերադարձվում է ձեզ, որպեսզի նետեք այն քվեատուփի մեջ:

Եթե ձեր քվեաթերթիկի վրա նշում կատարելիս սխալ եք թույլ տվել, ապա կրկին ծալեք այն և վերադարձրեք ընտրական հանձնաժողովի անդամին: Ձեզ կտրվի փոխարինված քվեաթերթիկ, որի վրա կարող եք նշում կատարել:

Ինչպես նշում կատարել լրացվող քվեաթերթիկի վրա

Եթե մասնակցում եք քվեարկությանը ձեր ընտրատեղամասում, ապա ձեզ կարող է տրվել քվեաթերթիկ, որի մեջ ինքներդ եք լրացում կատարում:

1. Տարեք ձեզ հետ ծալված քվեաթերթիկը դեպի քվեարկության Էկրանի հետևի մասը:
2. Հատկացված ազատ տարածքում լրացրեք այն թեկնածուի անուն-ազգանունը, որին ուզում եք ձեր ձայնը տալ:
3. Կրկին ծալեք նշված քվեաթերթիկը և վերադարձրեք այն ընտրական հանձնաժողովի անդամին, որպեսզի իր անվան սկզբնատառերը մակագրի քվեաթերթիկի հետևի մասում:
4. Այն բանից հետո, երբ քվեաթերթիկը վավերացվել է, այն վերադարձվում է ձեզ, որպեսզի նետեք այն քվեատուփի մեջ:

Եթե ձեր քվեաթերթիկի վրա նշում կատարելիս սխալ եք թույլ տվել, ապա կրկին ծալեք այն և վերադարձրեք ընտրական հանձնաժողովի անդամին: Ձեզ կտրվի փոխարինված քվեաթերթիկ, որի վրա կարող եք նշում կատարել: